ԲԱՑ ՆԱՄԱԿ ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՒԹՅԱՆԸ

Մելգոնեան Կրթական Հաստատութեան փակումը Համահայկական խնդիր է

ՕԳՆԵ՛Ք ՄԵԶ ՓՐԿԵԼՈՒ ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ ՓԱԿՎԵԼՈՒՑ ԿԱՄ ԾԱԽՎԵԼՈՒՑ

Սիրելի Հայեր,

2004 թվականի մարտի 16-ին ՀԲԸՄ-ի Կենտրոնական Վարչությունը (ԿՎ) տարածեց մինչև 2005 թվականի հունիսը Մելգոնեան Կրթական Հաստատութեան (ՄԿՀ) փակման մասին իր որոշումը: Մենք, Մելգոնեանցի Ինտեռնացիոնալը (ՄԻ՝ աշխարհի Մելգոնեան Շրջանավարտների Միությունների կոնֆեդերացիա) դիմում ենք համայն Սփյուռքին և յուրաքանչյուր հայ մարդու՝ օգնել մեզ կանխելու ՀԲԸՄ-ի ծրագրի իրականացումը:

Անկասկած Մելգոնեանը ամենակարևոր և ամենահայտնի հայկական դպրոցն է աշխահում: Այն համարվում է «ՀԲԸՄ-ի թագի գոհարը»: Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը երբևէ չի ձախողվել կամ դադարել իր առաքելությունը կատարելուց. այն ձևավորել է **ազգի սերուցքը** և դեռևս շարունակում է ստեղծել հզոր, հաջողակ և կամքով օժտված անհատներ՝ իրապես հիասքանչ մարդիկ: Ավելին, ՄԿՀ շրջանավարտները, որպես կանոն, բավականին քաղաքականացված են, հպարտ և սիրավառ իրենց պատմությամբ, մշակույթով, քաղաքակրթությամբ և ինքնությամբ, մի բան, որ հետզհետե դառնում է հազվադեպ հանդիպող նկարագիր ժամանակակից Սփյուռքի պատանիների մոտ: Միայն գիշերօթիկ դպրոցը կարող է հասնել այդ արդյունքին: ՄԿՀ-ն տվել է հայկական համայնքների առաջնորդներ, մտավորականներ, ուսուցիչներ, ակադեմիկներ, բժիշկներ, արվեստագետներ, պետական ծառայողներ, մասնագետներ և Սփյուռքի մարտիկների մի անվերջ բազմություն:

Դպրոցի փակումը Սփյուռքի պամության մեջ սոցիալական ինտեգրացիայի խաթարման և մշակութային հետաճի մի լրացուցիչ խթան կհանդիսանա: Հակիրճ ասած, ՄԿՀ-ի փակման կամ նրա գիշերօթիկ դպրոց չլինելու գաղափարը հավասարազոր է միաձուլման՝ «Սպիտակ Եղեռն»-ին օգնելուն կամ նպաստելուն:

ՀԲԸՄ-ն շարունակ ձախողվում է որևէ համոզիչ փաստարկով հիմնավորել իր որոշումը դպրոցը փակելու վերաբերյալ: Ավելին, առ այսօր ՀԲԸՄ-ն հրաժարվել է քննարկել այս հարցերից որևէ մեկը շահագրգիռ կողմերի հետ՝ նախընտրելով իր սև գործն անել փակ դռների հետևում: Նրանց պատասխանները եղել են վերացական, անհասկանալի և խուսափողական: Չկա թափանցիկության և հաշվետվողականության

պատասխանատվություն. նրանց վերաբերմունքը հայության նկատմամբ առհամարական է և քմահաճ: Եվ վերջապես, մեր կարծիքով, ՀԲԸՄ-ն շատ դեպքերում ստել է իր մտադրությունների մասին, անպատասխան է թողել բոլոր խնդրագրերը, և դեռևս շարունակում է աչքակապություն անել՝ վերաբերվելով ՄԿՀ-ին որպես իր անձնական սեփականություն:

ՄԿՀ-ն հիմնադրվել է Սփյուռքի հայությանը հայկական միջավայրի մեջ կրթելու համար: Մելգոնեան դպրոցը ավելի քան 40 երկրներից ժամանած պատանիներին տալիս է զուտ հայկական միջավայրում համատեղ ապրելու և մեծանալու հնարավորություն, այսպիսով՝ ընձեռելով ունակություն հայտնաբերել և զորացնել այն, ինչ միավորում է իրենց՝ հայի հոգին՝ անկախ այն հանգամանքից, թե որ երկրից են իրենք: Դրան կարելի է հասնել միայն կայացած **գիշերօթիկ** դպրոցի միջավայրում՝ իր հաստատուն ավանդույթներով և կենսակերպով, որն ունի ավելի քան 78 տարվա պատմություն. հենց դա է Մելգոնեանը:

1925 թվականին Կարապետ Մելգոնեանը հանձնեց իր ամբողջ հարստությունը (գործարաններ, հողեր Եգիպտոսում, բաժնեմասեր և այլն) ՀԲԸՄ- ին (Լոզան), որպեսզի հիմնադրվի «Մելգոնեան Հիմնադրամը»: Այդ հարստությունը գնահատվել է 425.092,5 Եգիպտական ֆունտ, և ՀԲԸՄ-ի հաշիվները ցույց են տալիս, որ 1925 թվականին 4.647.020 ԱՄՆ դոլար գումար է ստացվել: Այսօրվա փողով այդ հարստությունը հասնում է մոտ 1.500.000.000 ԱՄՆ դոլարի: Կարապետ Մելգոնեանի կողմից հստակ ասվել է, որ «Այս կապիտալի միայն տոկոսները և եկամուտը պետք է ծախսվի վերոհիշյալ նպատակի համար (Մելգոնեանի նպատակն է՝ «Ապահովել երիտասարդ աղքատ հայերի կրթությունը», տե՛ս Վավերագրի (Կտակ) VII կետը)»: Բայց և այնպես, Մելգոնեան հիմնադրամից այսօր մնացել է միայն 5.500.000 ԱՄՆ դոլար: 78 տարիների ընթացքում ՀԲԸՄ-ն ոչ մի հաշվետվություն չի ներկայացրել թե ինչ է պատահել այդ ամբողջ հարստության հետ և կոնկրետ ինչպես է ծախսել այդ հիմնադրամից առաջացած տոկոսները: Բացի այդ, այն շարունակաբար հրաժարվել է ներկայացնել նույնիսկ ՄԿՀ-ի հաշիվները:

Այսպիսով, հստակ է, որ ՀԲԸՄ-ին հանձնարարված էր միայն «Մելգոնեան Հիմնադրամի» ֆինանսական կառավարման պարտականությունը և շարունակաելու Մելգոնեան եղբայրների առաքելությունը: Վավերագիրը (Կտակը) նաև հստակորեն սահմանում է, որ ՀԲԸՄ-ն իրավունք չունի վաճառելու ՄԿՀ-ի հողերը կամ փակելու դպրոցը: Բայց և այնպես, Մելգոնեանի հողերի մի մեծ մաս իհարկե վաճարվել է 1980-ական թվականներին և այդ գումարները օգտագործվել են կառուցելու «Մելգոնեան Կոմերցիոն Կենտրոնը», ձեռնարկություն, որը խոստանում էր Մելգոնեանը դարձնել ինքնաֆինանսավորվող հաստատություն, բայց, ավաղ, դրա բոլոր եկամուտները մինչ օրս ուղղակի գնում են ՀԲԸՄ-ին: Ավելին, Վավերագիրը կազմված է այնպես, որ նույնիսկ, եթե ՀԲԸՄ-ն սնանկանա, դպրոցի չի կարող փակվել, և հստակորեն նշված են բոլոր

հրահանգները բանկերին, այն դեպքում, երբ ՀԲԸՄ-ն անկարող գտնվի շարունակելու կատարել Մելգոնեանի առաքելությունը: Բայց և այնպես, ՀԲԸՄ ԿՎ-ն իրեն իրավունք է վերապահում 2005 թվականի հունիսին ՄԿՀ-ն փակելու որոշում կայացնել:

Այս է նրանց (ՀԲԸՄ ԿՎ-ի) «որոշումը» և, եթե ոչ ոք չկանգնեցնի նրանց, նրանք կիրականացնեն դա 2005 թվականի հունիսին:

Մելգոնեանի փակման և վաճառքի հարցին վերաբերող բոլոր մանրամասները կարող եք գտնել **www.SaveMelkonian.org** կայքէջում:

Մենք օգնության կոչ ենք անում համայն հայությանը

Հաշվի առնելով վերոհիշյալը՝
ա) ՄԿՀ-ն դեռևս իրագործում է իր առաքելությունը և մնում է ամենակարևոր և առանձնահատուկ դպրոցը հայ Սփյուռքում: Եվ դպրոցի չափանիշները վերելք են ապրում,

բ) ՄԿՀ-ն կարող է լինել և է լիովին ինքնաֆինանսավորվող հաստատություն՝ չպահանջելով որևէ ներդրում ՀԲԸՄ ընդհանուր բյուջեից,

գ) Դպրոցի փակումը խախտում է Կարապետ Մելգոնեանի Կտակը (1925),

դ) Կիպրոսի բնակչությունը և կառավարությունը ցանկանում է, որ ՄԿՀ-ն մնա Կիպրոսում, և արդեն հայտնել է իր պատրաստակամությունը՝ կրկնապատկել իր կողմից դպրոցին հատկացվող արդեն իսկ նշանակալից դրամաշնորհը,

ե) Կիպրոսը՝ 2004 թվականի մայիսի 1-ից դառնալով Եվրամիության անդամ, ՄԿՀ-ին կտա շատ ավելի նպաստավոր առավելություններ, քան որևէ այլ առաջարկված տարբերակ:

Այսպիսով, մենք, **Մելգոնեանցի Ինտեռնացիոնալը (ՄԻ)՝** աշխարհի Մելգոնեան Շրջանավարտների Միությունների կոնֆեդերացիան, կոչ ենք անում համայն հայ ազգին և յուրաքանչյուր հայ մարդու՝ իրենց ուժերի ներածին չափով (թե՛ ֆինանսապես, և թե՛ գործնականորեն) օգնելու մեզ մեր պայքարում՝ ուղղված Մշակութային Եղեռնի դեմ, որ ՀԲԸՄ ԿՎ-ն պատրաստվում է ոճրագործել:

Մենք կոչ ենք անում Սփյուռքի յուրաքանչյուր կազմակերպության ամեն ձևով դեմ կանգնել ՀԲԸՄ-ի որոշման իրագործմանը:

Մենք կոչ ենք անում յուրաքանչյուր հայկական թերթի, ամսագրի, կայքէջի, յուրաքնչյուր ռադիոկայանի և հեռուստաընկերության լուսաբանել և տարածել տեղեկություն այն աղետի մասին, որ ՀԲԸՄ-ն մտադրվել է իրագործել:

Մենք կոչ ենք անում յուրաքանչյուր ազդեցիկ հայ գործարարի և քաղաքական գործչի օգնելու մեր գործին՝ կանգնեցնելու ՀԲԸՄ ԿՎ-ին և կամ աջակցելու մեր գործին ֆինանսապես և գործնականորեն:

Մենք կոչ ենք անում յուրաքանչյուր հայ մարդու աջակցելու մեզ ցանկացած հնարավոր ձևով. տեղեկացնել բոլորին իրենց համայնքում այս խնդրի փաստերի մասին, օգնել բարձրացնելու խնդրի իրազեկությունը, և որտեղ հնարավոր է՝ Մելգոնեանցի Ինտեռնացիոնալի կամ իրենց տեղական Մելգոնեան Շրջանավարտների Միության անունից հանգանակություն կազմակերպել: Ոչ մի չափի ներդրում, լինի դա ֆինանսական, թե բարոյական, սակավ չի կարող լինել:

Մենք ձեռնարկել ենք դրամահավաքի գործընթաց «Մելգոնեանցի Ինտեռնացիոնալ Հիմնադրամ» անվան տակ գումար հավաքելու համար: Բոլոր նվիրատվությունները ծառայելու են դպրոցը ներկայիս վիճակով բաց պահելու ջանքերին: Ամեն մի ցենտ արժեք ունի, և մենք կոչ ենք անում, որ յուրաքանչյուր հայ մարդ, ով ցանկանում է կանգնեցնել այս նոր «Սպիտակ Եղեռնը», կատարի նվիրատվություն: Դուք կարող եք կատարել ձեր նվիրատվությունը ինտերնետի միջոցով, բանկային փոխանցումով կամ իրականացնել ամսական կամ շաբաթական վճարներ: Հաշվի համարի տվյալները և տեղեկություններ նվիրատվություն կատարելու միջոցների մասին կարող եք գտնել մեր կայքէջում՝ www.SaveMelkonian.org:

Անկախ նրանից, թե ձեր նվիրատվությունը 5, 20 թե 10.000 ԱՄՆ դոլար է, նամակ կամ հեռախոսազանգ է պոտենցիալ դոնորի կամ կազմակերպության, հեռուստատեսային կամ ռադիո հաղորդում է, հայտարարություն է թերթում կամ մեր բաներն է ձեր կայքէջում, մեր պաստառն է կամ թերթիկը հայկական կենտրոններում, հանգանակության գործընթաց է ՄԻ-ի հիմնադրամի համար կամ նամակ՝ ուղղված ՀԲԸՄ ԿՎ-ին, ձեր ներդրումը մեր պայքարին կգնահատվի և կմոտեցնի մեզ այս համահայկական դպրոցը փրկելու առաքելության իրականացմանը:

Խնդրում ենք տարածել այս բաց նամակը: Մենք կարո՛ղ ենք և կփրկե՛նք Մելգոնեանը: Խնդրում ենք, մի՛ անտեսեք այս կոչը: **Արթնացե՛ք և պայքարե՛ք:**

Հարգանքներով՝

Մելգոնեանցի Ինտեռնացիոնալ
Համակարգող Հանձնախումբ
www.SaveMelkonian.org
Էլ. փոստ՝ admin@SaveMelkonian.org

Սա արդեն Համահայկական հարց է
ՄԵՆՔ ԵՐԲԵՔ ՉԵՆՔ ՀՈԳՆԻ